ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾ ԹԻՎ ՎԴ/1593/05/17 ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն

Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Հիմնական ակտ
Կարգավիճակ	Գործում է (07.06.2023-մինչ օրս)
Սկզբնաղբյուր	Միասնական կայք 2023.11.27-2023.12.10 Պաշտոնական հրապարակման օրը 27.11.2023
Ընդունող մարմին	Վճռաբեկ դատարան
Ընդունման ամսաթիվ	07.06.2023
Ստորագրող մարմին	Նախագահող
Ստորագրման ամսաթիվ	07.06.2023
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	07.06.2023

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/1593/05/17

2023 թ.

Վարչական գործ թիվ ՎԴ/1593/05/17

Նախագահող դատավոր՝ **Ա. Առաքելյան**

Դատավորներ՝ **Կ. Մաթևոսյան**

Ա. Բաբայան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող **Ռ. Հակոբյան**

զեկուցող **Ք. Մկոյան**

Հ. Բեդևյան

2023 թվականի հունիսի 07-ին

գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 04.05.2021 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Լուսինե Խաչիկյանի և «Կարեն Խաչիկյան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Տեսչական մարմնի՝ ՀՀ ԱՆ ԱՊՏ Երևանի քաղաքային կենտրոնի 29.12.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 178 որոշումը և ՀՀ ԱՆ ԱՊՏ Երևանի քաղաքային կենտրոնի 29.12.2016 թվականի Ընկերության տնօրեն Լուսինե Խաչիկյանին «Առաջադրանք տալու մասին» թիվ 324916-16 կարգադրագիրն անվավել ճանաչելու/վերացնելու/ պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Լուսինե Խաչիկյանը և Ընկերությունը պահանջել են անվավեր ճանաչել Տեսչական մարմնի՝ ՀՀ ԱՆ ԱՊՏ Երևանի քաղաքային կենտրոնի 29.12.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 178 որոշումը և ՀՀ ԱՆ ԱՊՏ Երևանի քաղաքային կենտրոնի 29.12.2016 թվականի Ընկերության տնօրեն Լուսինե Խաչիկյանին «Առաջադրանք տալու մասին» թիվ 324916-16 կարգադրագիրը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր Լ. Հակոբյան) (այսուհետ՝ Դատարան) 13.03.2020 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.05.2021 թվականի որոշմամբ Տեսչական մարմնի ներկայացրած վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 13.03.2020 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տեսչական մարմինը (ի պաշտոնե ներկայացուցիչ Հակոբ Ավագյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը, 12-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ կառավարության 29.06.2002 թվականի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության, դեղատնային գործունեության, կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման, դեղերի մեծածախ իրացման լիցենզավորման կարգերը և նշված գործունեությունների իրականացման լիցենզիայի ձևերը հաստատելու մասին» թիվ 867 որոշման 3-րդ հավելվածի 42-րդ կետը, սխալ է մեկնաբանել և կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 251-րդ, 252-րդ և 279-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Ընկերությունը, որպես լիցենզավորման ենթակա դեղատնային գործունեություն իրականացնող սուբյեկտ, պարտավոր է պահպանել իրավական ակտերով տվյալ գործունեության իրականացման համար նախատեսված պարտադիր պահանջները կամ պայմանները, այն է՝ պահպանել և իրացնել միայն ՀՀ-ում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված և պիտանիության ժամկետի մեջ գտնվող դեղերը:

Վարչական վարույթի շրջանակներում վարչական մարմինը, ի դեմս ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական պետական տեսչության Երևանի քաղաքային կենտրոնի, Ընկերության տնօրեն Լուսինե Խաչիկյանին ենթարկել է վարչական պատասխանատվության՝ չգրանցված դեղեր իրացնելու նպատակով պահպանելու համար, և տվել է համապատասխան կարգադրագիր՝ օգտագործման համար ոչ պիտանի դեղերը ոչնչացնելու վերաբերյալ: Տվյալ պարագայում նշված գործառույթները լրիվ օրինաչափ են, բխում են օրենսդրի ընդհանուր տրամաբանությունից և համապատասխանում են տվյալ ոլորտը կարգավորող իրավանորմերին:

Սույն դեպքում վարչական մարմնի համար որպես արձանագրված խախտման հիմք է հանդիսացել ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից ստացված ապացույցը՝ 27.12.2016 թվականի թիվ 0114235716 փորձագիտական եզրակացությունը: Մինչդեռ, հայցվորների կողմից արձանագրված խախտման մեջ իրենց մեղքը բացակայող որևէ ապացույց, ինչպիսին կարող էր լինել, օրինակ, մինչև դեղ ձեռք բերելը ներմուծող ընկերությունից պահանջված դեղի գրանցման հավաստագիրը, չի ներկայացվել ո՛չ վարչական մարմնին՝ վարչական վարույթի իրականացման ընթացքում, ո՛չ էլ ստորադաս դատարաններին՝ գործի դատավարական քննության ընթացում:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ընկերության դեղատան վաճառասրահում պահվող դեղերի տվյալների անհամապատասխանությունը կարող էր պարզ դառնալ հայցվորների կողմից գրանցամատյանում առկա դեղերի տվյալների հետ համեմատելու դեպքում: Օրինակ՝ փորձագիտական եզրակացությամբ նշված է, որ Աուգմենտին 125մգ/31.25մ 100մլ դեղի գրանցման հավաստագրի իրավատերը տարբերվում է ՀՀ-ում գրանցված դեղի գրանցման հավաստագրի իրավատիրոջից: Վերոնշյալ գրանցամատյանում ևս առկա են գրանցման հավաստագրի իրավատիրոջ վերաբերյալ տվյալները:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանն իր կողմից կայացված դատական ակտով սխալ եզրահանգման է եկել հայցվորների պարտականությունների շրջանակի վերաբերյալ, հաշվի չի առել և չի կիրառել բողոքում նշված իրավանորմերը, չի համադրել գործում առկա փաստական հանգամանքների հետ և գտել է, որ հայցվորների անգործությունը՝ ՀՀ օրենսդրությամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելը, իրավաչափ են և վերջիններիս մոտ բացակայում է մեղքը, քանի որ հայցվորները չէին կարող ենթադրել, որ ՀՀ ներմուծված դեղերը ՀՀ-ում գրանցված չեն:

Նման մոտեցումը ոչ իրավաչափ է, քանի որ դեղատնային գործունեություն իրականացնող սուբյեկտները պարտավոր են հետևել դեղերի շրջանառությունը կարգավորող օրենսդրական բոլոր նորմերի պահանջներին:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 04.05.2021 թվականի որոշումը և փոփոխել այն, կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 05.12.2016 թվականին դուրս գրված հարկային հաշվի համաձայն՝ Ընկերությունը «Վագա-Ֆարմ» ՍՊ ընկերությունից ձեռք է բերել 19 անուն դեղ, 06.12.2016 թվականին դուրս

գրված հարկային հաշվի համաձայն՝ Ընկերությունը «Վագա-Ֆարմ» ՍՊ ընկերությունից ձեռք է բերել 12 անուն դեղ, իսկ 10.11.2016 թվականին դուրս գրված հարկային հաշվի համաձայն՝ Ընկերությունը «Առգո-Ֆարմ» ՍՊ ընկերությունից ձեռք է բերել 3 անուն դեղ **(հատոր 1-ին, գ.թ. 51-55):**

2) 15.12.2016 թվականին ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական պետական տեսչության Երևանի քաղաքային կենտրոնի պետ Ա. Բեյբությանի «Վարչական վարույթ հարուցելու և ք. Երևան, Կոմիտասի 58-23 հասցեում գործող «Կարեն Խաչիկյան» ՍՊ ընկերությանը պատկանող դեղատնային կրպակում զննում իրականացնելու մասին» որոշմամբ Ընկերության կողմից «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ, 23-րդ, 26-րդ հոդվածների և դրանց առնչվող այլ իրավական ակտերի պահանջների պահպանումը պարզելու նպատակով հարուցվել է վարչական վարույթ և որոշվել է նշված վարույթի շրջանակներում 2016 թվականի դեկտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 23-ը ներառյալ ք.Երևան, Կոմիտասի 58-23 հասցեում գործող Ընկերությանը պատկանող դեղատնային կրպակում իրականացնել զննում **(հատոր 1-ին, գ.թ.79-80):**

3) 16.12.2016 թվականին կազմվել է զննման արձանագրություն, համաձայն որի՝ ք. Երևան, Կոմիտասի 58-23 հասցեում գործող Ընկերությանը պատկանող դեղատնային կրպակում առկա են ՀՀ-ում գրանցված օրինական լինելու և շրջանառվելու տեսանկյունից կասկած հարուցող 22 անուն դեղ **(հատոր 1-ին, գ.թ. 85)**:

4) «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲ ընկերության 27.12.2016 թվականի թիվ 0114235716 եզրակացության համաձայն՝ «Դեպակին քրոնո» 500մգ, N30, «Մեթիպրեդ» 4մգ, N30, «Մետրոգիլ» 5մգ/մլ, 100մլ, «Արբիդոլ» 50մգ, N10 դ/h, «Արբիդոլ» 100մգ, N10 դ/h, «Լիպրիմար» 40մգ, N30, «Դեպակին քրոնո» 300մգ, N100 դ/h, «Աուգմենտին» 125մգ/31.25մգ, 100մլ, «Գալազոլին» 0,1%, 10մլ, «Գալազոլին» 0,05%, 10մլ դեղերը Հայաստանի Հանրապետությունում գրանցված չեն **(հատոր 1-ին, գ.թ. 99-100)**:

5) ՀՀ ԱՆ աշխատակազմի ԱՊՏ Երևանի քաղաքային կենտրոնի դեղերի և դեղագործական գործունեության վերահսկողության բաժնի դեղագետների կողմից 27.12.2016 թվականին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 178 արձանագրությամբ արձանագրվել է, որ «...ՀՀ ԱՆ աշխատակազմի ԱՊՏ Երևանի քաղաքային կենտրոնի պետի 15.12.2016թ. թիվ 322158-16 որոշման հիման վրա ք. Երևան, Կոմիտասի 58-23 հասցեում գործող «Կարեն Խաչիկյան» ՍՊ ընկերությանը պատկանող դեղատնային կրպակում 2016 թվականի դեկտեմբերի 16-ին իրականացված զննման արդյունքում պարզեցինք, որ դեղատնային կրպակի վաճառքի սրահում առկա էին Հայաստանի Հանրապետությունում գրանցված լինելու տեսակետից կասկած հարուցող 22 անվանում դեղեր, որոնք փորձաքննության նպատակով ուղարկվել են ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲ ընկերություն: Փորձաքննության արդյունքում (հիմք «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲ ընկերության 27.12.16թ. թիվ 0114235716 եզրակացություն) պարզվել է, որ Երևան, Կոմիտասի 58-23 հասցեում գործող «Կարեն Խաչիկյան» ՍՊ ընկերությանը պատկանող դեղատնային կրպակի վաճառքի սրահում հայտնաբերված հետևյալ դեղերը Հայաստանի Հանրապետությունում գրանցված չեն.

1. «Դեպակին քրոնո» 500մգ, N30 (սերիա՝ 6A281, պիտանելիության ժամկետ՝ 02.2019թ.), 1 տուփ

2. «Մետիպրեդ» 4մգ, N30 (սերիա՝ 1722393, պիտանելիության ժամկետ՝ 04.2021թ.), 2 տուփ:

3. «Մետրոգիլ» 5մգ/մլ, 100մլ (սերիա՝ IIX6197, պիտանելիության ժամկետ՝ 04.2019թ.), 1 տուփ:

4. «Արբիդոլ» 50մգ, N10 (սերիա՝ 10216, պիտանելիության ժամկետ 03.2019թ.), 1 տուփ:

5. «Արբիդոլ» 100մգ, N10 (սերիա՝ 180216, պիտանելիության ժամկետ 03.2019թ.), 5 դեղապատիճ:

6. «Լիպրիմար» 40մգ, N30 (սերիա՝ R24444, պիտանելիության ժամկետ՝ 09.2018թ.), 1 տուփ:

7. «Դեպակին քրոնո» 300մգ, N100 (սերիա՝ 6A122, պիտանելիության ժամկետ՝ 02.2019թ.), 25 դեղահաբ:

8. «Աուգմենտին» 125մգ/31.25մգ, 100մլ (սերիա՝ 747258, պիտանելիության ժամկետ՝ 09.2017թ.), 1 տուփ:

9. «Գալազոլին» 0,1%, 10մլ (սերիա՝ 14VM1215, պիտանելիության ժամկետ՝ 12.2019թ.), 6 տուփ:

10. «Գալազոլին» 0,05%, 10մլ (սերիա՝ 03VL0615, պիտանելիության ժամկետ՝ 06.2019թ.), 2 տուփ:

Վերոնշվածով խախտվել է՝ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը, այն է՝ «Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է արտադրել, ներմուծել, բաշխել, բաց թողնել, իրացնել և կիրառել այն դեղերը, որոնք գրանցված

են Հայաստանի Հանրապետությունում, բացառությամբ նույն օրենքով սահմանված դեպքերի» **(հատոր 1-ին, գ.թ. 31-33):**

6) ՀՀ ԱՆ ԱՊՏ Երևանի քաղաքային կենտրոնի պետ Ա. Բեյբությանի 29.12.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 178 որոշմամբ «Կարեն Խաչիկյան» ՍՊ ընկերության տնօրեն Լուսինե Խաչիկյանը, որպես խախտում թույլ տված անձ, «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները խախտելու և Հայաստանի Հանրապետությունում չգրանցված 8 անվանում դեղեր իրացնելու նպատակով պահպանելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 47.3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ենթարկվել է վարչական տույժի՝ 800.000 ՀՀ դրամի չափով **(հատոր 1-ին, գ.թ. 18-25):**

7) ՀՀ ԱՆ ԱՊՏ Երևանի քաղաքային կենտրոնի պետ Ա. Բեյբությանի Ընկերության տնօրեն Լուսինե Խաչիկյանին «Առաջադրանք տալու մասին» թիվ 324916-16 կարգադրագրով կարգադրվել է՝

«1. Կարգադրագիրը ստանալու օրվանից անհապաղ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ, մշտապես ապահովել «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, այն է՝ Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է արտադրել, ներմուծել, բաշխել, բաց թողնել, իրացնել և կիրառել այն դեղերը, որոնք գրանցված են Հայաստանի Հանրապետությունում, բացառությամբ նույն օրենքով սահմանված դեպքերի:

2. Մշտապես ապահովել «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ՀՀ-ում չգրանցված «Դեպակին քրոնո» 500մգ, N30 (սերիա՝ 6A281, պիտանելիության ժամկետ՝ 02.2019թ.), 1 տուփ, «Մեթիպրեդ» 4մգ, N30 (սերիա՝ 1722393, պիտանելիության ժամկետ՝ 04.2021թ.), 2 տուփ, «Մետրոգիլ» 5մգ/մլ, 100մլ (սերիա՝ IIX6197, պիտանելիության ժամկետ՝ 04.2019թ.), 1 տուփ, «Արբիդոլ» 50մգ, N10 (սերիա՝ 10216, պիտանելիության ժամկետ՝ 03.2019թ.), 1 տուփ, «Արբիդոլ» 100մգ, N10 (սերիա՝ 180216, պիտանելիության ժամկետ՝ 03.2019թ.), 5 դեղապատիճ, «Լիպրիմար» 40մգ, N30 (սերիա՝ R24444, պիտանելիության ժամկետ՝ 09.2018թ.), 1 տուփ, «Դեպակին քրոնո» 300մգ, N100 (սերիա՝ 6A122, պիտանելիության ժամկետ՝ 02.2019թ.), 25 դեղահաբ, «Աուգմենտին» 125մգ/31.25մգ, 100մլ (սերիա՝ 747258, պիտանելիության ժամկետ՝ 09.2017թ.), 1 տուփ, «Գալազոլին» 0,1%, 10մլ (սերիա՝ 14VM1215, պիտանելիության ժամկետ՝ 12.2019թ.), 6 տուփ, «Գալազոլին» 0,05%, 10մլ (սերիա՝ 03VL0615, պիտանելիության ժամկետ՝ 06.2019թ.), 2 տուփ դեղերը ոչնչացնել՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 04.03.2008 թվականի թիվ 03-Ն հրամանով հաստատված «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և համաճարակային պահանջներ» թիվ 2.1.3-3 սանիտարական կանոններով և նորմերով սահմանված կարգի» **(հատոր 1-ին, գ.թ. 26-30):**

<u>4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը.

- արդյո՞ք դեղատնային գործունեության իրականացնող սուբյեկտը կրում է իրացվող դեղերի՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված լինելու փաստը ստուգելու պարտականություն՝ վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 47.3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի) կամ գրանցումն օրենքով սահմանված կարգով կասեցված կամ օրենքի խախտմամբ դեղեր ներմուծելը կամ արտադրելը կամ պահպանելը կամ բաշխելը կամ իրացնելը կամ կիրառելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր անվանմամբ դեղի՝

1) մինչև 10 փաթեթի դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով.

2) 10-ից մինչև 30 փաթեթի դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև երեքհարյուրհիսնապատիկի չափով.

3) 30 և ավելի փաթեթի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

Նշված իրավական հիմքով հայցվոր Լուսինե Խաչիկյանը վարչական պատասխանատվության է ենթարկվել Հայաստանի Հանրապետությունում չգրանցված դեղեր իրացնելու համար:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի շրջանառության հետ կապված հարաբերությունները՝ բնակչությանն անվտանգ, արդյունավետ, որակյալ, մատչելի դեղերով և դրանց մասին հավաստի տեղեկատվությամբ ապահովելու նպատակով, ինչպես նաև սահմանում է Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմինների և դեղերի շրջանառության սուբյեկտների լիազորություններն այդ ոլորտում:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի շրջանառությունը կարգավորվում է նույն օրենքով, այլ օրենքներով և իրավական այլ ակտերով:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **դեղ**՝ դեղաբանական և (կամ) իմունաբանական և (կամ) նյութափոխանակային ակտիվությամբ օժտված մարդկային և (կամ) կենդանական և (կամ) բուսական և (կամ) քիմիական և (կամ) կենսատեխնոլոգիական ծագման միջոց՝ համապատասխան դեղաչափով և դեղաձևով, անհրաժեշտ փաթեթավորմամբ և մակնշմամբ, որը նախատեսված է կիրառել մարդկանց և կենդանիների հիվանդությունները բուժելու, կանխարգելելու և (կամ) օրգանիզմի ֆիզիոլոգիական ֆունկցիաները փոփոխելու, վերականգնելու, կարգավորելու համար կամ ներմուծվում է մարդու և կենդանու օրգանիզմ հիվանդությունը ախտորոշելու նպատակով. (...)

20) **դեղերի շրջանառություն**՝ դեղի ստեղծում կամ նախակլինիկական հետազոտություն կամ կլինիկական փորձարկում կամ ստանդարտացում կամ արտադրություն կամ պատրաստում կամ դեղաբուսական հումքի մշակում կամ որակի հսկողություն կամ գրանցում կամ ներմուծում կամ արտահանում կամ փոխադրում, պահպանում կամ իրացում կամ բաշխում կամ կիրառում կամ արդյունավետության, անվտանգության և կողմնակի ազդեցությունների դիտարկում կամ տեղեկատվության կամ գովազդի տարածում կամ ոչնչացում.

21**) դեղերի շրջանառության սուբյեկտներ**՝ դեղերի շրջանառության որևէ փուլն իրականացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերեր. (...)

39) **գրանցամատյան**՝ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով գրանցում ստացած դեղերի ռեգիստր.

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանվում է առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի իրավասությունը դեղերի շրջանառության պետական կարգավորման բնագավառում, մասնավորապես 1-ին մասի համաձայն՝ **առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը (այսուհետ՝ Լիազոր մարմին)** դեղերի շրջանառության պետական կարգավորման բնագավառում իրականացնում է՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը դեղերի շրջանառության ոլորտում.

2) իր իրավասության շրջանակներում դեղերի շրջանառության կարգավորում.

3) դեղերի շրջանառության ոլորտի՝ օրենքով նախատեսված գործունեության տեսակների լիցենզավորում և օրենքով սահմանված վերահսկողություն.

4) դեղերի պետական գրանցում.

5) դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննությունների կազմակերպում և իրականացում.

6) դեղի գրանցման, պատշաճ արտադրական գործունեության, պատշաճ բաշխման գործունեության հավաստագրի տրամադրման համար և նույն օրենքով նախատեսված մասնագիտական այլ դիտարկումների ապահովում.

7) դեղերի գրանցամատյանի վարման ապահովում.

8) դեղերի արդյունավետ կիրառման և դեղերի կողմնակի ազդեցությունների մասնագիտական դիտարկման և համապատասխան երաշխավորությունների մշակման ապահովում.

9) միջազգային համագործակցություն.

10) միջգերատեսչական համագործակցություն.

11) դեղային պետական քաղաքականության ծրագրերի մշակում և դրանց իրականացման դիտարկում.

12) նույն օրենքով և այլ օրենքներով իրեն վերապահված գործառույթներ:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է արտադրել, ներմուծել, բաշխել, բաց թողնել, իրացնել և կիրառել այն դեղերը, որոնք գրանցված են Հայաստանի Հանրապետությունում, բացառությամբ նույն օրենքով սահմանված դեպքերի:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դեղի գրանցումը, գրանցումը մերժելը, կասեցնելը և ուժը կորցրած ճանաչելը փորձագիտական եզրակացության հիման վրա իրականացնում է Լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, բացառությամբ անասնաբուժական պատվաստանյութերի, շիճուկների և ախտորոշիչ միջոցների, որոնց պետական գրանցումը, գրանցումը մերժելը, կասեցնելը և ուժը կորցրած ճանաչելը իրականացնում է գյուղատնտեսության բնագավառի պետական Լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դեղի գրանցումը հիմնվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդունված արտադրանքի անվտանգության, արդյունավետության և որակի գիտականորեն հիմնավորված չափանիշների և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած միջազգային մասնագիտական կազմակերպությունների ընդունած փաստաթղթերի վրա՝ հաշվի առնելով նաև շրջակա միջավայրի վրա անցանկալի ազդեցության հնարավոր վտանգի գործոնները:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գրանցման ենթակա են դեղերի յուրաքանչյուր անվանում, բաղադրակազմ, դեղաչափ, դեղաձև, թողարկման ձև, նոր ցուցում, արտադրող (ներառյալ՝ յուրաքանչյուր արտադրական գործընթացն իրականացնող), գրանցման հավաստագրի իրավատեր:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գրանցման ժամանակ հաստատվում են դեղի առաջնային և (կամ) արտաքին փաթեթը, պիտակը, մակնիշը (այդ թվում՝ գունավոր պատկերների տեսքով), բժշկական կիրառման հրահանգը (դեղի ընդհանուր բնութագիրը), օգտագործման հրահանգը (ներդիր-թերթիկը) և որակի հատկորոշիչները (սպեցիֆիկացիաները):

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ գրանցման նպատակով հայտատու կարող է հանդես գալ արտադրողը կամ արտադրանքի համար պատասխանատու այլ անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ, որը դեղի գրանցումից հետո համարվում է գրանցման հավաստագրի իրավատերը: Գրանցման փաստաթղթերը կարող է ներկայացնել նաև հայտատուի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորված անձը: Ներկայացված տվյալների ճշտության և հավաստիության համար պատասխանատու է հայտատուն:

Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է դեղի գրանցման, վերագրանցման, հավաստագրի ժամկետի երկարաձգման նպատակով իրականացվող փորձաքննության կարգը՝ սահմանելով նոր, վերարտադրված դեղերի, կենսանմանակների, դեղերի համակցությունների, հոմեոպաթային, կենսաբանական դեղերի, ներառյալ՝ արյունից կամ պլազմայից ստացված, իմունաբանական, ռադիոակտիվ, անասնաբուժական դեղերի (ներառյալ՝ դեղանյութեր պարունակող անասնակերերի), բուսական դեղերի (այդ թվում՝ սպառողական փաթեթներում փաթեթավորված և պիտակավորված դեղաբուսական հումքի), մաշկի, լորձաթաղանթի, մազերի, եղունգների համար նախատեսված հիվանդությունների հարուցիչներին, ինչպես նաև դրանց փոխանցող միջատներին, մակաբույծներին ոչնչացնող հակասեպտիկների և հակապարազիտային դեղերի գրանցման, վերագրանցման և հավաստագրի ժամկետի երկարաձգման համար իրականացվող փորձաքննության եզրակացության ձևը, փորձաքննություն իրականացնելու համար պահանջվող փաստաթղթերի ցանկերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած միջազգային մասնագիտական կազմակերպության փաստաթղթի պահանջներին համապատասխան:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է իրացնել Հայաստանի Հանրապետությունում չգրանցված կամ որակի պահանջներին չհամապատասխանող կամ պիտանիության ժամկետն անցած կամ գրանցումն ուժը կորցրած ճանաչված կամ գրանցումը կասեցված կամ շրջանառությունը դադարեցված (հետ կանչված), Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ ներմուծված դեղերը, կեղծ դեղերը, դեղանյութերը, դեղաբուսական հումքը, հետազոտվող դեղագործական արտադրանքը (...):

Այսպես, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ կառավարության 25.04.2001 թվականի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման կարգը և դեղերի պետական գրանցման փորձաքննության վարձի չափերը հաստատելու մասին» թիվ 347 որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման կարգը (այսուհետ նաև՝ Կարգ) (ուժը կորցրել է 30.03.2019 թվականին), որը 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 15.12.2016 թվականին ուժը կորցրած «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածին համապատասխան, սահմանել է դեղերի գրանցման, գրանցման մերժման և գրանցումն անվավեր ճանաչելու հիմքերը և կարգը:

Կարգի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում թույլատրվում է արտադրել, ներմուծել, պահպանել, բաշխել, իրացնել և կիրառել այն դեղերը, որոնք գրանցված են Հայաստանի Հանրապետությունում:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պիտանիության ժամկետը լրացած, չգրանցված, ինչպես նաև կեղծ և օգտագործման համար ոչ պիտանի, ոչ օրինական ճանապարհով ձեռք բերված, անորակ, չհայտարարագրված բաղադրատարրեր պարունակող դեղերը, դեղանյութերը, դեղաբուսական հումքը և հետազոտվող դեղագործական արտադրանքը ոչնչացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով վտանգավոր թափոնների ոչնչացմանը ներկայացվող պահանջներին համապատասխան՝ լիցենզավորված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի ոչնչացումը ֆինանսավորվում է այն շրջանառության սուբյեկտի հաշվին, որի սեփականությունն է համարվում կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վերը նշված իրավական նորմերին, արձանագրել է, որ դեղը մարդու և կենդանու հիվանդությունների բուժման, ախտորոշման, կանխարգելման, անզգայացման, հղիության կանխման համար նախատեսված կենսաբանական ակտիվությամբ օժտված կշռաչափված միջոց է, որն ստացվել է մեկ կամ մի քանի դեղանյութերի և օժանդակ նյութերի հիման վրա, ունի ստանդարտ բաղադրություն, անփոփոխ անվանում, անհրաժեշտ դեղաչափ, դեղաձև և ձևավորում: Դեղը բնութագրող հիմնական հատկանիշներն են՝ *արդյունավետությունը*՝ դեղի սպասվելիք դրական ազդեցության դրսևորման աստիճանի բնութագիրը, *անվտանգությունը*՝ առողջությանը վնասելու հնարավոր անթույլատրելի ռիսկի բացակայությունը, և *որակը*՝ համապատասխանությունը դեղագրքային պահանջներին և/կամ որակի հատկորոշիչներին (սպեցիֆիկացիաներին): Ընդ որում, ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ միայն նշված հատկանիշների միաժամանակյա առկայության պայմաններում դեղը կարող է ծառայել իր նպատակին և պատշաճորեն կիրառվել գործնականում:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում անվտանգ, արդյունավետ և որակյալ դեղերի մատչելիության ապահովման կարևորությունը և առանձնահատուկ դերը բնակչության համար՝ օրենսդիրը կարգավորել է Հայաստանի Հանրապետությունում դեղերի շրջանառությունը, որն ընդգրկում է դրանց արտադրությունը, պատրաստումը, կշռաչափումը, փաթեթավորումը, գրանցումը, որակի հսկողությունը և այլ գործողություններ՝ դեղերի ստացման կամ ոչնչացման նպատակով, դեղերի ձեռքբերումը, պահպանումը, պահեստավորումը, բաշխումը, բացթողնումը, վաճառքը, արտահանումը, ներմուծումը, դրանց մասին տեղեկատվությունը, գովազդը, ինչպես նաև սահմանել է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների լիազորություններն այդ ոլորտում: Միևնույն ժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ վերոնշյալը բխում է հանրապետության առողջապահության այնպիսի սկզբունքներից, ինչպիսին են՝ պետական պատասխանատվությունը բնակչության առողջության համար և անվտանգ, արդյունավետ և որակյալ առողջապահական համակարգի ապահովումը:

ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ յուրաքանչյուր երկրի ազգային անվտանգության շահերը պահանջում են հավաստիանալ դեղերի արդյունավետության, անվտանգության և որակի մեջ, որը հնարավոր է միայն դեղերի գրանցման դեպքում: Այս համատեքստում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում թույլատրվում է արտադրել, ներմուծել, պահպանել, բաշխել, իրացնել և կիրառել այն դեղերը, որոնք **գրանցված են Հայաստանի Հանրապետությունում:** Դեղերի պետական գրանցումը մի քանի փուլերից բաղկացած վարչական գործընթաց է, որը հնարավորություն է տալիս խուսափելու և բնակչությանը զերծ պահելու անորակ, անարդյունավետ կամ քիչ արդյունավետ, վտանգավոր և կեղծ դեղերի կիրառումից: Այլ կերպ ասած՝ դեղերի գրանցումը արտադրանքի արդյունավետության, անվտանգության և որակի ապահովման համակարգի հիմքն է:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դեղերի գրանցման, գրանցման մերժման և գրանցումն անվավեր ճանաչելու հիմքերը և կարգը սահմանված են «Դեղերի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով: Դեղերի գրանցումը (բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի) կատարում է ՀՀ առողջապահության նախարարությունը, որի վերաբերյալ որոշումն ընդունվում է դեղերի որակի, արդյունավետության ու անվտանգության գիտականորեն հիմնավորված չափանիշների, փորձագիտական հետազոտությունների բավարար արդյունքների հիման վրա: Այսինքն՝ դեղերը գրանցելու կամ գրանցումը մերժելու մասին որոշումն ընդունվում է ՀՀ առողջապահության նախարարության սահմանած կարգով կատարված փորձաքննության եզրակացության հիման վրա:

Այսպիսով, փորձաքննության արդյունքների, դեղաբանական խորհրդի եզրակացության, ինչպես նաև դիմորդի կողմից պետական տուրքը սահմանված կարգով և չափով վճարվելուց հետո ՀՀ առողջապահության նախարարության կողմից կայացվում է դեղի գրանցման

վերաբերյալ որոշում, և հայտատուին տրվում է դեղի պետական գրանցման հավաստագիր, իսկ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղն ընդգրկվում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի մասին տեղեկություններ ընդգրկող փաստաթուղթ համարվող Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում (ռեգիստրում): Ընդ որում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանը (ռեգիստրը) հաստատվում է ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան հրամանով, որում նշվում են դեղի առևտրային անվանումը, միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները, դեղաձևը, դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը), արտադրողը, երկիրը, գրանցման ժամկետը, բաց թողնման կարգը, գրանցման հավաստագրի իրավատերը և այլ տեղեկություններ**:**

ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել այն հանգամանքը, որ գրանցված դեղի անվտանգության, արդյունավետության, որակի համար պատասխանատվություն է կրում դեղի գրանցման հավաստագրի իրավատերը և պարտավոր է ներկայացնել դրանց վերաբերյալ յուրաքանչյուր նոր տվյալ և/կամ փոփոխություն, որոնք հայտնաբերվել և/կամ կատարվել են հետգրանցումային շրջանում: Դեղի պետական գրանցման և գրանցման հավաստագրի իրավատիրոջ հետ մշտական կապի պայմաններում ստեղծվում է տվյալների համակարգ, որն օգտագործվում է դեղերի մասին օբյեկտիվ ու հավաստի պաշտոնական տեղեկատվության, ներկրման ու գովազդի հսկողության, շրջանառվող դեղերի տեսչական հսկողության ապահովման, ինչպես նաև դեղի անվտանգության մշտադիտարկման համար: Գրանցման ընդունված փաստաթղթերը և նմուշը հիմք են հանրապետությունում դեղերի շրջանառության բոլոր փուլերում դեղերի նույնականացման, որակի հսկողության և/կամ տեղեկատվության համար: Ըստ այդմ, ներկրվող դեղերի նմուշները համեմատվում և ստուգվում են պետական գրանցում ստացած նմուշների հետ, որը հնարավորություն է տալիս երկրի շուկան զերծ պահելու չգրանցված, անորակ և կեղծված դեղերի ներթափանցումից և շրջանառությունից:

Այդ նպատակով ՀՀ առողջապահության նախարարության կողմից կատարվում է դեղերի նմուշների նույնականացում պետական գրանցում ունեցող դեղերի նմուշների հետ, ստուգվում են ապրանքաուղեկից փաստաթղթերը, դրանց և նմուշների համապատասխանությունը: Այնուհետև՝ փաստաթղթային ուսումնասիրության և նույնականացման արդյունքների հիման վրա ընդունվում է որոշում որակի հսկման լաբորատորիայում ընտրված նմուշների լաբորատոր փորձաքննություն կատարելու մասին: Այն դեպքերում, երբ փաստաթղթային փորձաքննությունների, դեղի նմուշների նույնականացման և լաբորատոր փորձաքննության արդյունքները լինում են դրական, ՀՀ առողջապահության նախարարության կողմից տվյալ դեղի համար տրվում է ներմուծման հավաստագիր, իսկ այն դեպքերում, երբ փորձաքննությունների արդյունքները բացասական են **(օրինակ՝ եթե ներմուծվող դեղը Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում չունի),** տվյալ դեղի՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծումը մերժվում է:

ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ ներմուծվող դեղերի Հայաստանի Հանրապետությունում գրանցված լինելու փաստը կարող է հաստատվել միայն ներմուծվող դեղերի և Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում (ռեգիստրում) պետական գրանցում ունեցող դեղերի՝ ներառյալ վերջինիս բոլոր վավերապայմանների համապատասխանության պայմաններում: Հետևաբար՝ ներմուծվող դեղը Հայաստանի Հանրապետությունում գրանցում ունենալու փաստը պարզելու համար անհրաժեշտ է համեմատել ներմուծվող դեղի և Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեգիստրում) գրանցված դեղի՝ գրանցամատյանում նշված տեղեկությունները: Այլ կերպ ասած, եթե ներմուծվող դեղի վերաբերյալ տեղեկությունները չեն համապատասխանում դեղերի պետական գրանցամատյանում (ռեգիստրում) գրանցված դեղի վերաբերյալ տեղեկություններին, ապա կարելի է փաստել, որ ներմուծվող դեղը Հայաստանի Հանրապետությունում գրանցում չունի, իսկ եթե ներմուծվող դեղի վերաբերյալ տեղեկությունները համապատասխանում են դեղերի պետական գրանցամատյանում (ռեգիստրում) գրանցված դեղի վերաբերյալ տեղեկություններին, ապա կարելի է փաստել, որ ներմուծվող դեղը գրանցված է Հայաստանի Հանրապետությունում:

Ամփոփելով վերոգրյալը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ներմուծվող դեղերի Հայաստանի Հանրապետությունում գրանցված լինելը փաստելու համար անհրաժեշտ է ներմուծվող դեղի բոլոր վավերապայմանների համապատասխանությունը դեղերի պետական գրանցամատյանում (ռեգիստրում) գրանցված դեղի վավերապայմաններին, որոնցից մեկն էլ հանդիսանում է դեղի գրանցման հավաստագրի իրավատիրոջ վերաբերյալ վավերապայմանը (այլ տեղեկություններ): ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ դեղի հավաստագրի իրավատիրոջ վավերապայմանի գրանցումն ինքնանպատակ չէ, և ինչպես արդեն վերը նշվեց, այն կարևոր նշանակություն ունի դեղի որակի, անվտանգության ու արդյունավետության տեսանկյունից, քանի որ դրանով է նաև պայմանավորված դեղերի որակին ներկայացվող երաշխիքների պահպանության հարցը և դեղի՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված լինելու հանգամանքը:

ՀՀ վճռաբեկ դատարանը վերոնշյալ իրավական դիրքորոշումների համատեքստում

անհրաժեշտ է համարել դիտարկել դեղերի շրջանառության հետ կապված բոլոր հարաբերությունները, այդ թվում նաև՝ դեղերի իրացման գործընթացը։

Այսպես, դեղերի շրջանառությունն իրականացնող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը «Դեղերի մասին» ՀՀ օրենքի իմաստով հանդիսանում է դեղերի շրջանառության սուբյեկտ, քանի որ նույն օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան իրականացնում է դեղերի և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած այլ ապրանքատեսակների մեծածախ ձեռքբերում, պահպանում և մանրածախ իրացում կամ բաց թողնում, տեղեկատվություն և խորհրդատվություն, առողջ ապրելակերպի քարոզչություն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության դեպքում դեղերի պատրաստում կամ առաքում։ Այսինքն՝ օրենսդրի կողմից դեղերի շրջանառություն իրականացնող սուբյեկտների շարքում են դասվել նաև դեղատնային գործունեություն իրականացնող յուրաքանչյուր իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր։

Հայաստանի Հանրապետությունում, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, թույլատրվում է արտադրել, ներմուծել, բաշխել, **բաց թողնել, իրացնել** և կիրառել միայն այն դեղերը, որոնք **գրանցված են Հայաստանի Հանրապետությունում**, իսկ ինչպես արդեն արձանագրվել է դեղերի գրանցման, գրանցման մերժման և գրանցումն անվավեր ճանաչելու հիմքերը և կարգը սահմանված են «Դեղերի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով։

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերոնշյալ իրավակարգավորումներից ուղղակիորեն բխում է, որ Հայաստանի Հանրապետությունում արգելվում է իրացնել չգրանցված կամ որակի պահանջներին չհամապատասխանող կամ պիտանիության ժամկետն անցած կամ գրանցումն ուժը կորցրած ճանաչված կամ գրանցումը կասեցված կամ շրջանառությունը դադարեցված (հետ կանչված), Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ ներմուծված դեղերը, կեղծ դեղերը, դեղանյութերը, դեղաբուսական հումքը, հետազոտվող դեղագործական արտադրանքը։

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է իրացնել միայն օրենքով սահմանված կարգով դեղերի ռեգիստրում գրանցված դեղերը, իսկ գրանցման ենթակա են դեղերի յուրաքանչյուր անվանում, բաղադրակազմ, դեղաչափ, դեղաձև, թողարկման ձև, նոր ցուցում, արտադրող (ներառյալ՝ յուրաքանչյուր արտադրական գործընթացն իրականացնող), գրանցման հավաստագրի իրավատեր և այլն։

ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ օրենսդրի կողմից նման խիստ մոտեցումը պետական լիազոր մարմնի կողմից և դեղերի ցանկացած շրջանառություն իրականացնող սուբյեկտների նկատմամբ հսկողության իրականացումը ուղղված է կեղծ և որակի ստանդարտներին չհամապատասխանող (անորակ) դեղերի շրջանառությունը կանխարգելելուն, ինչպես նաև անձանց կյանքն և առողջությունը վնասելու հնարավոր անթույլատրելի ռիսկերից խուսափելուն։

Նման պայմաններում ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ դեղատնային գործունեություն իրականացնելու թույլտվություն (լիցենզիա) ունեցող ցանկացած սուբյեկտ նույն կերպ, ինչպես, որ դեղերի ցանկացած շրջանառություն իրականացնող սուբյեկտ, կրում է պարտականություն ձեռքբերելու, պահպանելու, իրացնելու, բաց թողնելու բացառապես այն դեղերը, որոնք գրանցված են դեղերի ռեգիստրում՝ միաժամանակ հաշվի առնելով և ստուգելով դեղերի յուրաքանչյուր անվանում, բաղադրակազմ, դեղաչափ, դեղաձև, թողարկման ձև, նոր ցուցում, արտադրող, գրանցման հավաստագրի իրավատեր և այլն։

Ընդ որում, օրենսդիրն իմպերատիվ պահանջ է սահմանել դեղերի շրջանառություն իրականացնող ցանկացած սուբյեկտի համար ոչնչացնելու պիտանիության ժամկետը լրացած, չգրանցված, ինչպես նաև կեղծ և օգտագործման համար ոչ պիտանի, ոչ օրինական ճանապարհով ձեռք բերված, անորակ, չհայտարարագրված բաղադրատարրեր պարունակող դեղերը, դեղանյութերը, դեղաբուսական հումքը և հետազոտվող դեղագործական արտադրանքը՝ միաժամանակ այդ ապրանքների ոչնչացման ֆինանսավորումը նույնպես դնելով վերջիններիս կամ այլ օրենքով չարգելված աղբյուրների վրա *(տե՛ս, «Գենիաֆարմ» ՍՊԸ-ի տնօրեն Եվգենիյա Սարգսյանն ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության Առողջապահական պետական տեսչության թիվ ՎԴ/1329/05/17 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2022 թվականի որոշումը)*։

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ԱՆ ԱՊՏ Երևանի քաղաքային կենտրոնի պետ Ա. Բեյբությանի 29.12.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 178 որոշման համաձայն որոշվել է Ընկերության տնօրեն Լուսինե Խաչիկյանին, որպես խախտում թույլ տված անձի, «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները խախտելու և Հայաստանի Հանրապետությունում չգրանցված 8 անվանում դեղեր իրացնելու նպատակով պահպանելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 47.3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ենթարկել վարչական տույժի՝ 800.000 ՀՀ դրամի

չափով:

Միաժամանակ, ՀՀ ԱՆ ԱՊՏ Երևանի քաղաքային կենտրոնի պետ Ա. Բեյբությանի կողմից Ընկերության տնօրեն Լուսինե Խաչիկյանին «Առաջադրանք տալու մասին» թիվ 324916-16 կարգադրագրով կարգադրվել է՝

«1. Կարգադրագիրը ստանալու օրվանից անհապաղ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ, մշտապես ապահովել «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, այն է՝ Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է արտադրել, ներմուծել, բաշխել, բաց թողնել, իրացնել և կիրառել այն դեղերը, որոնք գրանցված են Հայաստանի Հանրապետությունում, բացառությամբ նույն օրենքով սահմանված դեպքերի:

2. Մշտապես ապահովել «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ՀՀ-ում չգրանցված «Դեպակին քրոնո» 500մգ, N30 (սերիա՝ 6A281, պիտանելիության ժամկետ՝ 02.2019թ.), 1 տուփ, «Մեթիպրեդ» 4մգ, N30 (սերիա՝ 1722393, պիտանելիության ժամկետ՝ 04.2021թ.), 2 տուփ, «Մետրոգիլ» 5մգ/մլ, 100մլ (սերիա՝ IIX6197, պիտանելիության ժամկետ՝ 04.2019թ.), 1 տուփ, «Արբիդոլ» 50մգ, N10 (սերիա՝ 10216, պիտանելիության ժամկետ՝ 03.2019թ.), 1 տուփ, «Արբիդոլ» 100մգ, N10 (սերիա՝ 180216, պիտանելիության ժամկետ՝ 03.2019թ.), 5 դեղապատիճ, «Լիպրիմար» 40մգ, N30 (սերիա՝ R24444, պիտանելիության ժամկետ՝ 09.2018թ.), 1 տուփ, «Դեպակին քրոնո» 300մգ, N100 (սերիա՝ 6A122, պիտանելիության ժամկետ՝ 02.2019թ.), 25 դեղահաբ, «Աուգմենտին» 125մգ/31.25մգ, 100մլ (սերիա՝ 747258, պիտանելիության ժամկետ՝ 09.2017թ.), 1 տուփ, «Գալազոլին» 0,1%, 10մլ (սերիա՝ 14VM1215, պիտանելիության ժամկետ՝ 12.2019թ.), 6 տուփ, «Գալազոլին» 0,05%, 10մլ (սերիա՝ 03VL0615, պիտանելիության ժամկետ՝ 06.2019թ.), 2 տուփ դեղերը ոչնչացնել՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 04.03.2008 թվականի թիվ 03-Ն հրամանով հաստատված «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և համաճարակային պահանջներ» թիվ 2.1.3-3 սանիտարական կանոններով և նորմերով սահմանված կարգի»**:**

Դատարանը բավարարել է Ընկերության հայցը՝ պատճառաբանելով, որ «(…) Տվյալ դեպքում, խնդրո առարկա դեղերը «Կարեն Խաչիկյան» ՍՊԸ-ի կողմից ձեռք բերելու պահին գործել է ՀՀ առողջապահության նախարարի 12.07.2016թ. թիվ 25-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանը /ռեեստրը/: Ըստ այդ ռեեստրի՝ խնդրո առարկա դեղերը եղել են Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղեր: Հետևաբար, նման պայմաններում, հայցվորը չէր կարող ենթադրել այն տվյալների առկայության մասին, որոնք «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲ փորձագետներին հիմք են տվել եզրահանգելու՝ առանձին դեղերի՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված չլինելու մասին: Այսինքն՝ հայցվորը խնդրո առարկա դեղերը ներմուծող կազմակերպություններից ձեռք բերելիս չէր կարող ենթադրել այդ դեղերին վերաբերող այնպիսի տվյալների առկայության մասին, որոնք կարող էին բացահայտվել և տվյալ դեպքում բացահայտվել են միայն փորձաքննության արդյունքում:

Դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել նաև, որ պատասխանողի կողմից որպես չգրանցված դեղեր որակված դեղերի՝ չգրանցված լինելու հանգամանքը պարզվել է միայն փորձաքննության արդյունքում, որպիսի հանգամանքը ևս փաստում է, որ հայցվորը ներմուծող ընկերություններից և ՀՀ առողջապահության նախարարի 12.07.2016թ. թիվ 25-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում /ռեեստրում/ տեղ գտած դեղերը ներմուծելիս չէր կարող ենթադրել, որ իր կողմից ձեռք բերված դեղերը Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղեր չեն հանդիսանում:

Վերոհիշյալի հիման վրա դատարանը եզրահանգում է, որ հայցվոր Լուսինե Խաչիկյանի վարքագծում բացակայել է մեղքը՝ ինչպես դիտավորության, այնպես էլ անզգուշության ձևով դրսևորված, որպիսի պայմաններում զանցակազմի սուբյեկտիվ կողմի բացակայության պայմաններում Լուսինե Խաչիկյանին վարչական պատասխանատվության ենթարկելն իրավաչափ չէ:

Ինչ վերաբերում է վիճարկվող կարգադրագրին, ապա դատարանի գնահատմամբ այն ևս հանդիսանում է ոչ իրավաչափ վարչական ակտ՝ հետևյալ պատճառաբանությամբ. Դատարանն արձանագրում է, որ փորձաքննության օբյեկտ հանդիսացած դեղերը պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի.

1. Փորձագետները տվյալ դեղը գնահատել են որպես չգրանցված դեղ՝ միաժամանակ նշելով նման գնահատականի հիմքերը /դեպագին քրոնո 500մգ, 30, մեթիպրեդ 4մգ, 30, մետրոգիլ 5մգ, 100մլ, աուգմենտին 125մգ/31.25մգ, 100մլ/,

2. Տվյալ դեղը գնահատել են որպես չգրանցված դեղ՝ հղում կատարելով մեկ այլ փորձագիտական եզրակացության /արբիդոլ 50մգ, 10դ/h, արբիդոլ 100մգ դ/h/,

3. Տվյալ դեղը գնահատել են որպես չգրանցված դեղ՝ չնշելով որևէ տվյալ, տեղեկություն, որի հիման վրա եզրահանգել են տվյալ դեղի գրանցված չլինելու մասին / լիպրիմար 40 մգ, 30, դեպակին քրոնո 300մգ 100, գալազոլին 0.1 տոկոս, 10մլ, գալազոլին 0.05 տոկոս, 10մլ/:

Վերը նշված 1-ին խումբ դեղերի առնչությամբ դատարանը նշված փորձագիտական

եզրակացությունը կազմած փորձագետների՝ վկայի կարգավիճակում տված ցուցմունքների հետազոտման արդյունքում արձանագրում է, որ առանձին հանգամանքներ, որոնք փորձագետները հիմք են ընդունել տվյալ դեղը չգրանցված դեղ դիտարկելու համար, ամբողջությամբ և միանշանակ չեն պարզվել. ըստ վկաների՝ այդ հանգամանքներն ամբողջությամբ պարզելու հնարավորությունն օբյեկտիվորեն սահմանափակված է՝ պայմանավորված նրանով, որ այդ դեղերը Հայաստանի Հանրապետություն են ներմուծվել սահմանված կարգի խախտմամբ՝ առանց ներմուծման հավաստագրերի: Ըստ վկա Հասմիկ Մարտիրոսյանի՝ այն դեպքում, երբ դեղերը փորձաքննության են ենթարկվում դրանք ներմուծելու թույլտվություն տրամադրելու հարցը լուծելու շրջանակներում, բոլոր հանգամանքները ամբողջությամբ պարզելու հնարավորությունը, ի տարբերություն նշված իրավիճակի, առկա է:

Ինչ վերաբերում է վերը նշված 3-րդ խմբի դեղերին, ապա ըստ վկաների ցուցմունքների՝ դրանց գրանցված չլինելու վերաբերյալ տրված գնահատականի հիմքում ընկած հանգամանքները 27.12.2016թ. թիվ 011425716 եզրակացության մեջ չեն նշված, քանի որ դրանց վերաբերյալ առկա է եղել մեկ այլ փաստաթուղթ՝ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ տնօրեն Հ. Թոփչյանի՝ ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական պետական տեսչության Երևանի քաղաքային կենտրոնի պետ Ա. Բեյբությանին ուղղված 03.07.2017թ. 0114120417 գրությունը: Դատարանն արձանագրում է, որ նշված փաստաթղթին, որևէ հղում կատարված չէ վիճարկվող կարգադրագրի համար հիմք հանդիսացած 27.12.2016թ. թիվ 011425716 եզրակացության մեջ, այդ գրությունը վարչական վարույթի նյութ չի հանդիսացել, որպիսի պայմաններում հայցվորը վարչական վարույթի ընթացքում չի իրացրել նաև այդ փաստաթղթին ծանոթանալու իր իրավունքը: Նշված փաստաթուղթը դատարան է ներկայացվել միայն դատարանի պահանջով սույն գործի դատաքննության փուլում: Վերոհիշյալի հիման վրա դատարանը եզրահանգում է, որ ըստ վիճարկվող կարգադրագրի՝ ոչնչացման ենթակա դեղերի գնահատումը՝ որպես չգրանցված դեղեր, հիմնվել է ոչ ամբողջական և լիարժեք փորձագիտական եզրակացության վրա, որը, ընդ որում, որևէ այլընտրանք չունի՝ հաշվի առնելով, որ նման փորձաքննություն իրականացնող միակ կազմակերպությունը «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲ ընկերությունն է»:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Տեսչական մարմնի ներկայացրած վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ, իրավաչափ է համարել Դատարանի հետևություններն այն պատճառաբանությամբ, որ «(…) Վերաքննիչ դատարանը սույն գործի լուծման համար կարևորում է այն հանգամանքը, որ խնդրո առարկա դեղերը «Կարեն Խաչիկյան» ՍՊԸ-ի կողմից ձեռք բերելու պահին գործել է ՀՀ առողջապահության նախարարի 12.07.2016 թվականի թիվ 25-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանը /ռեեստրը/, ըստ որի՝ խնդրո առարկա դեղերը եղել են Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղեր, ինչը նշանակում է, որ հայցվորը չէր կարող ենթադրել այն տվյալների առկայության մասին, որոնք «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲ փորձագետներին հիմք են տվել եզրահանգելու՝ առանձին դեղերի՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված չլինելու մասին: Այսինքն, ինչպես իրավացիորեն արձանագրել է Վարչական դատարանը, հայցվորը խնդրո առարկա դեղերը ներմուծող կազմակերպություններից ձեռք բերելիս չէր կարող ենթադրել այդ դեղերին վերաբերող այնպիսի տվյալների առկայության մասին, որոնք կարող էին բացահայտվել և տվյալ դեպքում բացահայտվել են միայն փորձաքննության արդյունքում:

Վերաքննիչ դատարանի նման եզրահանգման համար հիմք է հանդիսանում այն, որ պատասխանողի կողմից որպես չգրանցված դեղեր որակված դեղերի՝ Հայաստանի Հանրապետությունում չգրանցված լինելու հանգամանքը պարզվել է միայն փորձաքննության արդյունքում, որպիսի հանգամանքը ևս փաստում է, որ հայցվորը ներմուծող ընկերություններից և ՀՀ առողջապահության նախարարի 12.07.2016 թվականի թիվ 25-Ն հրամանով հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում /ռեեստրում/ տեղ գտած դեղերը ներմուծելիս չէր կարող ենթադրել, որ իր կողմից ձեռք բերված դեղերը Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղեր չեն հանդիսանում:

Հետևաբար հիմնավոր է Վարչական դատարանի եզրահանգումն այն մասին, որ հայցվոր Լուսինե Խաչիկյանի վարքագծում բացակայել է մեղքը՝ ինչպես դիտավորության, այնպես էլ անզգուշության ձևով դրսևորված, որպիսի պայմաններում զանցակազմի սուբյեկտիվ կողմի բացակայության պայմաններում Լուսինե Խաչիկյանին վարչական պատասխանատվության ենթարկելն իրավաչափ չէ»:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործի փաստերից հետևում է, որ Ընկերությունում իրականացված զննման արդյունքում հայտնաբերվել են Հայաստանի Հանրապետությունում գրանցված լինելու տեսանկյունից կասկած հարուցող դեղեր, որոնցից՝ «Դեպակին քրոնո» 500մգ, N30, (սերիա՝

6A281, պիտանելիության ժամկետ՝ 02.2019թ.), 1 տուփ, «Մեթիպրեդ» 4մգ, N30, (սերիա՝ 1722393, պիտանելիության ժամկետ՝ 04.2021թ.), 2 տուփ, «Մետրոգիլ» 5մգ/մլ, 100մլ, (սերիա՝ IIX6197, պիտանելիության ժամկետ՝ 04.2019թ.), 1 տուփ, «Լիպրիմար» 40մգ, N30, (սերիա՝ R24444, պիտանելիության ժամկետ՝ 09.2018թ.), 1 տուփ, «Դեպակին քրոնո» 300մգ, N100, սերիա՝ 6A122, պիտանելիության ժամկետ՝ 02.2019թ.), 25 դեղահաբ, «Աուգմենտին» 125մգ/31.25մգ, 100մլ (սերիա՝ 747258, պիտանելիության ժամկետ՝ 09.2017թ.), 1 տուփ, «Գալազոլին» 0,1%, 10մլ (սերիա՝ 14VM1215, պիտանելիության ժամկետ՝ 12.2019թ.), 6 տուփ, «Գալազոլին» 0,05%, 10մլ (սերիա՝ 03VL0615, պիտանելիության ժամկետ՝ 06.2019թ.), 2 տուփ դեղերը 27.12.2016 թվականի թիվ 0114235716 փորձագիտական եզրակացության համաձայն Հայաստանի Հանրապետությունում գրանցված չեն:

Սույն գործով և՛ Դատարանը, և՛ Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարի 12.07.2016 թվականի «Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանը (ռեեստրը) հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 09.03.2016 թվականի N 09-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 25-Ն հրամանի (ՀՀ առողջապահության նախարարի կողմից 17.02.2017 թվականին ընդունված և 27.03.2017 թվականին ուժի մեջ մտած թիվ 06-Ն հրամանի 2-րդ կետով ուժը կորցրած է ճանաչվել) 1-ին կետով հաստատված Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում) ամրագրված տվյալները, փաստել են, որ Ընկերությանը պատկանող կրպակում Հայաստանի Հանրապետությունում չգրանցված դեղեր չեն պահպանվել:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ նշված դեղերը Ընկերությանը պատկանող դեղորայքային կրպակին մատակարարվել են «Առգո-Ֆարմ» և «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ից, ինչը նշանակում է, որ դրանք արդեն իսկ ներմուծված են եղել Հայաստանի Հանրապետության տարածք և ըստ այդմ էլ դրանց՝ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ունենալու հանգամանքը պարզված է եղել: Այսինքն, հայցվորը խնդրո առարկա դեղերը ներմուծող կազմակերպություններից ձեռք բերելիս չէր կարող ենթադրել այդ դեղերին վերաբերող այնպիսի տվյալների առկայության մասին, որոնք կարող էին բացահայտվել և տվյալ դեպքում բացահայտվել են միայն փորձաքննության արդյունքում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերությունը, որպես դեղատնային գործունեություն իրականացնող սուբյեկտ, իրավունք ունի պահպանելու միայն Հայաստանի Հանրապետության դեղերի պետական ռեգիստրում գրանցված դեղերը, իսկ ինչպես արդեն նշվել է գրանցման ենթակա են դեղերի յուրաքանչյուր անվանում, բաղադրակազմ, դեղաչափ, դեղաձև, թողարկման ձև, նոր ցուցում, արտադրող (ներառյալ՝ յուրաքանչյուր արտադրական գործընթացն իրականացնող), գրանցման հավաստագրի իրավատեր: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դեղերի շրջանառություն իրականացնող յուրաքանչյուր սուբյեկտ կրում է պարտականություն ստուգելու և հավաստիանալու շրջանառվող դեղի՝ օրենքով սահմանված կարգով գրանցված համարվելու բոլոր չափորոշիչների համապատասխանությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանը (ռեգիստրը) հաստատվում է ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան հրամանով, որում նշվում են դեղի առևտրային անվանումը, միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները, դեղաձևը, դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը), արտադրողը, երկիրը, գրանցման ժամկետը, բաց թողնման կարգը, գրանցման հավաստագրի իրավատերը և այլ տեղեկություններ: Ընկերությունը դեղերի պահպանման և մանրածախ իրացման կամ բաց թողնման յուրաքանչյուր գործընթացում կրում է պարտականություն համեմատելու իր մոտ առկա յուրաքանչյուր դեղի չափորոշիչները պետական գրանցամատյանում առկա համանուն դեղի հետ և հավաստիանալու դրանց նույնականության հարցում, մասնավորապես նաև՝ դեղի արտաքին փաթեթավորման գրառումներում առկա ցուցումների նույնականությունը: Հետևաբար, անհրաժեշտ է ստուգել պահպանվող դեղի առևտրային անվանումը, միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները, դեղաձևը, դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը), արտադրողը, երկիրը, գրանցման ժամկետը, բաց թողնման կարգը, գրանցման հավաստագրի իրավատերը, քանի որ վերջինիս թույլատրվում է պահպանել միայն օրենքով սահմանված կարգով դեղերի ռեգիստրում գրանցված դեղերը:

ՀՀ առողջապահության նախարարի 12.07.2016 թվականի «Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանը (ռեեստրը) հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2016 թվականի մարտի 09-ի թիվ 09-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 25-Ն հրամանով (ուժի մեջ է մտել 04.08.2016 թվականին և ուժը կորցրել է 27.03.2017 թվականին) հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանը (ռեեստրը)՝ համաձայն հավելվածի:

ՀՀ առողջապահության նախարարի 12.07.2016 թվականի թիվ 25-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանի (ռեեստրի) **937-րդ տողում** գրանցված է եղել «Դեպակին քրոնո» անվանումով դեղը հետևյալ հատկանիշներով՝ առևտրային անվանում՝ Դեպակին քրոնո

Depakine Chrono, միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները՝ վալպրոաթթու (նատրիում վալպրոատ) valproic acid (valproate sodium), դեղաձևը՝ դեղահատեր թաղանթապատ, երկարատև ձերբազատմամբ, դեղաչափը և թողարկման ձևը՝ 500մգ, պլաստիկե տարայում, (30), արտադրողը՝ Սանոֆի Ուինթրոպ Ինդաստրի, 1, ռուե դե լա Վիերգե, Ամբարես և Լագրավ, 33565 Կարբոն Բլանկ ցեդեքս, երկիրը՝ Ֆրանսիա, դեղերի ATC1 ծածկագիրը և/կամ տեսակային պատկանելությունը՝ N03AG01, գրանցման հավաստագրի համար՝ 12734, գրանցման ժամկետը՝ 23.07.2013-23.07.2018, բացթողնման կարգը՝ Դ, գրանցման հավաստագրի իրավատերը՝ Սանոֆի-Ավենտիս Ֆրանս, 1-13 բուլվար Ռոմեն Ռոլանդ, 75014 Փարիզ, Ֆրանսիա,

2416-րդ տողում գրանցված է եղել «Մեթիպրեդ» անվանումով դեղը հետևյալ հատկանիշներով՝ առևտրային անվանում՝ Մեթիպրեդ Methypred, միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները՝ մեթիլպրեդնիզոլոն methylprednisolone, դեղաձևը՝ դեղահատեր, դեղաչափը և թողարկման ձևը՝ 4մգ, պլաստիկե տարայում, արտադրողը՝ Օրիոն Քորպորեյշն, Օրիոնինտի 1, 02200 Էսպոո, երկիրը՝ Ֆինլանդիա, դեղերի ATC1 ծածկագիրը և/կամ տեսակային պատկանելությունը՝ H02AB04, գրանցման հավաստագրի համար՝ 14254**,** գրանցման ժամկետը՝ 20.02.2015-20.02.2020, բացթողնման կարգը՝ Դ, գրանցման հավաստագրի իրավատերը՝ Օրիոն Քորպորեյշն, Օրիոնինտի 1, 02200 Էսպոո, Ֆինլանդիա,

2478-րդ տողում գրանցված է եղել «Մետրոգիլ» անվանումով դեղը հետևյալ հատկանիշներով՝ առևտրային անվանում՝ Մետրոգիլ Metrogyl, միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները՝ մետրոնիդազոլ metronidazole, դեղաձևը՝ լուծույթներ ներարկման, դեղաչափը և թողարկման ձևը՝ 5մգ/մլ, 100մլ պլաստիկե շշիկ, արտադրողը՝ Յունիք Ֆարմասյուտիկալ Լաբորատորիես (Ջ. Բ. Քեմիկալս և Ֆարմասյուտիկալս ՍՊԸ-ի մասնաճյուղ), (Պլոտ No 4, Գ.Ի.Դ.Ս. Ինդուստրիալ Արեա, Պանոլի: 394 116, Գուջարատ նահանգ), երկիրը՝ Հնդկաստան, դեղերի ATC1 ծածկագիրը և/կամ տեսակային պատկանելությունը՝ J01XD01, գրանցման հավաստագրի համար՝ 13001, գրանցման ժամկետը՝ 28.10.2013-28.10.2018, բացթողնման կարգը՝ Դ, գրանցման հավաստագրի իրավատերը՝ Յունիք Ֆարմասյուտիկալ Լաբորատորիես (Ջ. Բ. Քեմիկալս և Ֆարմասյուտիկալս ՍՊԸ-ի մասնաճյուղ), (Նիլամ Սենթր, «B» Վինգ, 4-րդ հարկ, Հինդ Սայքլ Ռոադ, Վորլի Մումբայ 400 030, Հնդկաստան),

1778-րդ տողում գրանցված է եղել «Լիպրիմար» անվանումով դեղը հետևյալ հատկանիշներով՝ առևտրային անվանում՝ Լիպրիմար Liprimar, միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները՝ ատորվաստատին atorvastatin, դեղաձևը՝ դեղահատեր թաղանթապատ, դեղաչափը և թողարկման ձևը՝ 40մգ, բլիստերում (30/3x10/), արտադրողը՝ Պֆայզեր Մանուֆակտուրինգ Դոյչլանդ ԳմբՀ, Բետրիեբստատ Ֆրեյբուրգ, Մոլվալդալե 1, 79090 Ֆրեյբուրգ - փաթեթավորող (դեղաձևև արտադրող-Պֆայզեր Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, Կմ 1.9, Ռոադ 689 Վեգա Բաջա,ՊՌ 00693 Պուերտո Ռիկո, ԱՄՆ), երկիրը՝ Գերմանիա, դեղերի ATC1 ծածկագիրը և/կամ տեսակային պատկանելությունը՝ C10AA05, գրանցման հավաստագրի համար՝ 12255, գրանցման ժամկետը՝ 07.03.2013-07.03.2018, բացթողնման կարգը՝ Դ, գրանցման հավաստագրի իրավատերը՝ Պֆայզեր Ֆարմա ԳմբՀ, Լինկստր.10,10785 Բեռլին, Գերմանիա,

938-րդ տողում գրանցված է եղել «Դեպակին քրոնո» անվանումով դեղը հետևյալ հատկանիշներով՝ առևտրային անվանում՝ Դեպակին քրոնո Depakine Chrono, միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները՝ վալպրոաթթու (նատրիում վալպրոատ) valproic acid (valproate sodium), դեղաձևը՝ դեղահատեր թաղանթապատ, դեղաչափը և թողարկման ձևը՝ 300մգ (30), պլաստիկե տարայում (100/2x50/), արտադրողը՝ Սանոֆի Ուինթրոպ Ինդաստրի, 1, ռուե դե լա Վիերգե, Ամբարես և Լագրավ, 33565 Կարբոն Բլանկ ցեդեքս, երկիրը՝ Ֆրանսիա, դեղերի ATC1 ծածկագիրը և/կամ տեսակային պատկանելությունը՝ N03AG01, գրանցման հավաստագրի համար՝ 12733, գրանցման ժամկետը՝ 23.07.2013-23.07.2018, բացթողնման կարգը՝ Դ, գրանցման հավաստագրի իրավատերը՝ Սանոֆի-Ավենտիս (Սուիս) ՍԱ, 11, ռուե դե Վեյևոտ 1217 Մեյրին, Շվեյցարիա,

325-րդ տողում գրանցված է եղել «Աուգմենտին» անվանումով դեղը հետևյալ հատկանիշներով՝ առևտրային անվանում՝ Աուգմենտին Augmentin, միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները՝ ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ), քլավուլանաթթու (կալիումի քլավուլանատ) amoxicillin (amoxicillin trihydrate), clavulanic acid (potassium clavulanate), դեղաձևը՝ դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի, դեղաչափը և թողարկման ձևը՝ 125մգ/5մլ+31,25մգ/5մլ, 100մլ ապակե շշիկ, արտադրողը՝ ՍմիթԿլայն Բիչեմ Լիմիտեդ, Կլարենդոն ճ., Վորթինգ, Վեսթ Սուզեքս, ԲՆ14 8ՔՀ, երկիրը՝ Մեծ Բրիտանիա, դեղերի ATC1 ծածկագիրը և/կամ տեսակային պատկանելությունը՝ J01CR02, գրանցման հավաստագրի համար՝ 12475/1, գրանցման ժամկետը՝ 21.03.2014-13.05.2018, բացթողնման կարգը՝ Դ, գրանցման հավաստագրի իրավատերը՝ Բիչեմ Գրուպ ՍՊԸ, 980 Գրիթ Վեսթ ճ, Բրենտֆորդ, Միդլեսեքս, ԹՎ8 9ԳՍ, Միացյալ Թագավորություն,

768-րդ տողում գրանցված է եղել «Գալազոլին» անվանումով դեղը հետևյալ հատկանիշներով՝ առևտրային անվանում՝ Գալազոլին 0,05% Galazolin 0,05%, միջազգային

համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները՝ քսիլոմետազոլին (քսիլոմետազոլինի հիդրոքլորիդ) xylometazoline (xylometazoline hydrochloride), դեղաձևը՝ քթակաթիլներ (լուծույթ), դեղաչափը և թողարկման ձևը՝ 0,5մգ/մլ, 10մլ պլաստիկե սրվակ, արտադրողը՝ Վարշավայի դեղագործական գործարան «Պոլֆա» Ս.Ա. /Կարոլկովա 22/24 փ., 01-207 Վարշավա/, երկիրը՝ Լեհաստան, դեղերի ATC1 ծածկագիրը և/կամ տեսակային պատկանելությունը՝ R01AA07, գրանցման հավաստագրի համար՝ 13046, գրանցման ժամկետը՝ 25.11.2013-25.11.2018, բացթողնման կարգը՝ ԱԴ, գրանցման հավաստագրի իրավատերը՝ Վարշավայի դեղագործական գործարան «Պոլֆա» Ս.Ա. /Կարոլկովա 22/24 փ., 01-207 Վարշավա, Լեհաստան/,

769-րդ տողում գրանցված է եղել «Գալազոլին» անվանումով դեղը հետևյալ հատկանիշներով՝ առևտրային անվանում՝ Գալազոլին 0,1% Galazolin 0,1%, միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները՝ քսիլոմետազոլին (քսիլոմետազոլինի հիդրոքլորիդ) xylometazoline (xylometazoline hydrochloride), դեղաձևը՝ քթակաթիլներ (լուծույթ), դեղաչափը և թողարկման ձևը՝ 1մգ/մլ, 10մլ պլաստիկե սրվակ, արտադրողը՝ Վարշավայի դեղագործական գործարան «Պոլֆա» Ս.Ա. /Կարոլկովա 22/24 փ., 01-207 Վարշավա/, երկիրը՝ Լեհաստան, դեղերի ATC1 ծածկագիրը և/կամ տեսակային պատկանելությունը՝ R01AA07, գրանցման հավաստագրի համար՝ 13047, գրանցման ժամկետը՝ 25.11.2013-25.11.2018, բացթողնման կարգը՝ ԱԴ, գրանցման հավաստագրի իրավատերը՝ Վարշավայի դեղագործական գործարան «Պոլֆա» Ս.Ա. /Կարոլկովա 22/24 փ., 01-207 Վարշավա, Լեհաստան/:

«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 27.12.2016 թվականին տրված թիվ 0114235716 փորձագիտական եզրակացության համաձայն նշվել է, որ «Դեպակին քրոնո» 500մգ, N30, սերիա՝ 6A281, գրանցված չէ, սերիան բացակայում է փորձագիտական կենտրոնի ներմուծման տվյալների բազայից, «Մեթիպրեդ» 4մգ, N30, սերիա՝ 1722393, գրանցված չէ, սերիան բացակայում է փորձագիտական կենտրոնի ներմուծման տվյալների բազայից, «Մետրոգիլ» 5մգ/մլ, 100մլ, սերիա՝ 11X6197, գրանցված չէ, սերիան բացակայում է ԴՓԿ դեղերի ներմուծման փորձաքննության տվյալների բազայից, «Լիպրիմար» 40մգ, N30, սերիա՝ R24444, գրանցված չէ, սերիան բացակայում է ԴՓԿ դեղերի ներմուծման փորձաքննության տվյալների բազայից, «Դեպակին քրոնո» 300մգ, N100, սերիա՝ 6A122, գրանցված չէ, սերիան բացակայում է փորձագիտական կենտրոնի ներմուծման տվյալների բազայից, «Աուգմենտին» 125մգ/31.25մգ, 100մլ, սերիա՝ 747258, գրանցված չէ, սերիան բացակայում է փորձագիտական կենտրոնի ներմուծման տվյալների բազայից, «Գալազոլին» 0,1%, 10մլ, սերիա՝ 14VM1215, գրանցված չէ, «Գալազոլին» 0,05%, 10մլ, սերիա՝ 03VL0615, գրանցված չէ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերությունը, զբաղվելով դեղատնային գործունեությամբ, պահպանել է Հայաստանի Հանրապետությունում չգրանցված դեղեր, որի հիմքով էլ ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական պետական տեսչության Երևանի քաղաքային կենտրոնի պետի 29.12.2016 թվականի թիվ 178 որոշմամբ Ընկերության տնօրեն Լուսինե Խաչիկյանին իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 47.3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ի կետով ենթարկվել է վարչական տույժի:

Բացի այդ, ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական պետական տեսչությունն արձակել է կարգադրագիր, որի 2-րդ կետով սահմանվել է «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի պահանջին համապատասխան Ընկերության տնօրեն Լուսինե Խաչիկյանին առաջադրանք տալ նույն կարգադրագիրը ստանալու օրվանից անհապաղ ձեռնարկել համապատասխան միջոցներ և ոչնչացնել Հայաստանի Հանրապետությունում չգրանցված դեղերը՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 04.03.2008 թվականի թիվ 03-Ն հրամանով հաստատված «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և համաճարակային պահանջներ» թիվ 2.1.3-3 սանիտարական կանոններով և նորմերով սահմանված կարգի, և իրականացված միջոցառումների մասին 30 օրյա ժամկետում գրավոր տեղեկացնել ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական պետական տեսչության Երևանի քաղաքային կենտրոնին:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների և փաստական հանգամանքների համադրման արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 27.12.2016 թվականին տրված թիվ 0114235716 փորձագիտական եզրակացությունը, որով հիմնավորվում է, որ «Կարեն Խաչիկյան» ՍՊԸ-ից հայտնաբերված վերոգրյալ դեղերի չափորոշիչները նույնական չեն Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում) ամրագրված դեղերի չափորոշիչներին: Այսինքն, Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում դեղի գրանցման վավերապայմանների և սույն գործով վիճարկվող դեղերի վավերապայմանների միջև առկա են անհամապատասխանություններ, ինչն էլ հիմք է հանդիսացել պետական լիազոր մարմնի կողմից «Կարեն Խաչիկյան» ՍՊԸ-ի տնօրենին պատասխանատվության ենթարկելու համար:

Վերոգրյալ ամբողջից հետևում է, որ վարչական մարմնի կողմից վարչական վարույթն իրականացվել է ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով, այլ իրավական ակտերով սահմանված

պահանջներին համապատասխան, վարչական վարույթի ընթացքում ձեռք են բերվել բոլոր անհրաժեշտ և բավարար ապացույցները՝ ապահովելով գործի բոլոր հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը և բացահայտումը: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վիճարկվող որոշումն անվավեր ճանաչելու հիմքերը բացակայում են:

Հիմք ընդունելով վերոնշյալ վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ցանկացած պարագայում դեղատնային գործունեություն իրականացնող սուբյեկտը պարտավոր է ստուգել դեղի՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված լինելու հանգամանքը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունները հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր է, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ եթե վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտի վիճարկման գործերով պատասխանող վարչական մարմնի վերաքննիչ բողոքի հիման վրա օրենքի ուժով պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված սուբյեկտի հայցը վերաքննիչ վարչական դատարանի կողմից մերժվում է, ապա վերջինս չպետք է կրի պատասխանող վարչական մարմնի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված կամ վճարման ենթակա պետական տուրքի հատուցման պարտականություն *(տե՛ս, Գագիկ Ավետիսյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/1390/05/17 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը)*:

Հաշվի առնելով, որ ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով հայցադիմումը դատարան ներկայացնելու պահին գործող օրենքի ուժով ազատված են պետական տուրք վճարելու պարտականությունից՝ դատական բողոքարկման բոլոր փուլերում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերը նշված իրավական դիրքորոշումը կիրառելի է նաև այն դեպքում, երբ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտի վիճարկման գործերով պատասխանող վարչական մարմնի վճռաբեկ բողոքի հիման վրա օրենքի ուժով պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված սուբյեկտի հայցը ստորադաս դատարանի դատական ակտի բեկանման և փոփոխման արդյունքում մերժվում է Վճռաբեկ դատարանի կողմից: Այլ կերպ ասած՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքից հայցադիմումը

դատարան ներկայացնելու պահին գործող օրենքի ուժով ազատված հայցվորի վրա չի կարող դրվել պատասխանող վարչական մարմնի կողմից վճռաբեկ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի փոխհատուցման պարտականություն՝ անկախ այդ վճռաբեկ բողոքի քննության արդյունքում գործի ելքն ի վնաս հայցվորի փոխվելու հանգամանքից:

Հաշվի առնելով, որ Ընկերության տնօրեն Լուսինե Խաչիկյանը, հայցադիմումը՝ ՀՀ ԱՆ ԱՊՏ Երևանի քաղաքային կենտրոնի 29.12.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 178 որոշումը վիճարկելու պահանջի մասով, դատարան ներկայացնելու պահին գործող «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի 6-րդ պարբերության ուժով ազատված է սույն գործով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքի վճարման պարտավորությունից, նրա կողմից ներկայացված հայցը ենթակա է մերժման, իսկ սույն գործով վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու համար Տեսչական մարմնի կողմից վճարված օրենքով սահմանված չափով պետական տուրքի փոխհատուցման պարտականությունը՝ նշված պահանջի մասով, չի կարող դրվել Ընկերության տնօրեն Լուսինե Խաչիկյանի վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետական տուրքի հարցը նշված մասով պետք է համարել լուծված:

Անդրադառնալով ՀՀ ԱՆ ԱՊՏ Երևանի քաղաքային կենտրոնի 29.12.2016 թվականի Ընկերության տնօրեն Լուսինե Խաչիկյանին «Առաջադրանք տալու մասին» թիվ 324916-16 կարգադրագիրն անվավել ճանաչելու/վերացնելու/ պահանջի մասով պետական տուրքի բաշխման հարցին և նկատի ունենալով, որ Տեսչական մարմինը վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար վճարել է համապատասխանաբար՝ 10.000 ՀՀ դրամ և 20.000 ՀՀ դրամ, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տեսչական մարմնի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիման վրա, ենթակա է հատուցման Ընկերության կողմից:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետական տուրքից բացի, այլ դատական ծախս կատարված լինելու վերաբերյալ որևէ ապացույց գործում առկա չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով և 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 04.05.2021 թվականի որոշումը և այն փոփոխել. Լուսինե Խաչիկյանի և «Կարեն Խաչիկյան» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի՝ ՀՀ ԱՆ ԱՊՏ Երևանի քաղաքային կենտրոնի 29.12.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 178 որոշումը և ՀՀ ԱՆ ԱՊՏ Երևանի քաղաքային կենտրոնի 29.12.2016 թվականի «Կարեն Խաչիկյան» ՍՊԸ-ի տնօրեն Լուսինե Խաչիկյանին «Առաջադրանք տալու մասին» թիվ 324916-16 կարգադրագիրն անվավել ճանաչելու պահանջների մասին, մերժել:

2. «Կարեն Խաչիկյան» ՍՊԸ-ից հօգուտ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար, 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար, մնացած մասով դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող **Ռ. Հակոբյան**

Զեկուցող **Ք. Մկոյան**

Հ. Բեդևյան

Պաշտոնական հրապարակման օրը՝ 27 նոյեմբերի 2023 թվական:

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան